ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում են մրցույթներ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր Այգեվան գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի (2 դրույք) և երաժիշտ դաստիարակի (1 դրույք) թափուր տեղերի համար։

Դաստիարակի և երաժիշտ դաստիարակի պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի հաստատած դրույքաչափի։

Մրցույթների մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում
2. կրթության մասին փաստաթուղթ
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/
5. ինքնակենսագրություն
6. մեկ լուսանկար՝ 3/4 չափի
7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/
10. որակավորման տարակարգ /առկայության դեպքում/։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 2025 թվականի նոյեմբերի 25-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:30-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթները տեղի կունենան 2025 թվականի նոյեմբերի 27-ին՝ ժամը 11:00-ին «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում։

Հասցեն՝ գյուղ Այգեվան 5-րդ փողոց 1-ին նրբանցք 1 շենք։